

**ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՀՍԽՅ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ  
ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ  
(1921-1922 ԹԹ.)**

**ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի առևտրատնտեսական հարաբերություններն էական նշանակություն ունեցան Հայաստանի տնտեսության վերականգնման և զարգացման գործում: Հայ պատմագիտական գրականության մեջ (ինչպես Խորհրդային, այնպես էլ հետխորհրդային) հիմնական ուշադրությունը բևեռվել է Ռուսաստանի՝ Հայաստանին ցույց տված օգնությանը<sup>1</sup>, և աչքաթող է արվել երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների փաստը: Հորվածում նպատակ ունենք վեր հանելու ու լուսաբանելու Մոսկվայում ՀՍԽՅ լիազոր ներկայացուցչության արգասաբեր գործունեությունը Ռուսաստանի մի շարք քաղաքների և գործարանների հետ առևտրատնտեսական կապերի հաստատման ուղղությամբ:

Մոսկվայում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչության հիմնումը խթանեց հայ-ռուսական քաղաքական և առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը: Գտնվելով Մոսկվայում, որտեղ իրենց ներկայացուցչություններն ունեին բազմաթիվ պետություններ, Հայաստանի լիազոր ներկայացուցիչը կարող էր կապեր հաստատել և Հայաստանի համար փոխշահավետ առևտրական պայմանագրեր կնքել տարբեր ընկերությունների հետ: Հայիեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 26-ի նիստում հավանություն է տրվում Սահակ Տեր-Գաբրիելյանի թեկնածությանը որպես ՌԱՖԽՅ-ում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ<sup>2</sup>: Դեկտեմբերի 29-ին ՀՍԽՅ արտգործոժողկոմ Ալ. Բեկզադյանը հեռագիր է ուղարկում Մոսկվա՝ Գ. Չիչերինին՝ նշելով, որ Սահակ Տեր-Գաբրիելյանը նշանակվում է ՌԱՖԽՅ-ում ՀՍԽՅ լիազոր ներկայացուցիչ, իսկ 1921 թ. հունվարի 6-ին նորանշանակ լիազոր ներկայացուցիչն իր հավատարմագրերն է հանձնում Չիչերինին<sup>3</sup>:

Անցնելով աշխատանքի՝ Սահակ Տեր-Գաբրիելյանը Խորհրդային Հայաստանի կառավարության անունից բանակցություններ է վարում և մի շարք համաձայնագրեր կնքում ՌԱՖԽՅ արտգործոժողկոմատի հետ, այդ թվում՝ քաղաքացիության, հանրապետությունների երկկողմ ֆինանսական ու տնտեսական կապերի և այլ հարցերի վերաբերյալ: Բացի այդ՝ բանակցություններ է վարում Մոսկվայում օտարերկրյա պետությունների

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, **Ա. Վ. Վարդապետյան** Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին 1920-1925 թթ., Եր., 1959, **Ս. Վ. Խարմանդարյան** Վ. Ի. Լենինի ցուցումները Կովկասի կոմունիստներին 1921 թ. և նրանց իրազորումը Հայկական ՍՍՌ-ում, Եր. 1954, **Կ. Հ. Խաչատրյան**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., 2007 թ. և այլն:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 19:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, ց. 1, գ. 9, թ. 2, 3:

Ներկայացուցչությունների և կազմակերպությունների հետ հատկապես Հայաստանին օգնություն կազմակերպելու հարցերի շուրջ: Նա Հայաստանի ներկայացուցիչներ է նշանակում Չեռավորարևելյան հանրապետությունում՝ Մանջուրիայում, կազմակերպում է Խորհրդային Հայաստանի համար հավաքված նյութական ու դրամական միջոցների փոխադրումը Հայաստան:

Մոսկվայում Հայաստանի լիազոր-ներկայացուցչության կազմը, ինչպես նաև գործունեության կարգը համաձայնեցված էին ՌՍՖՍՀ արտգործ-ժողովուհարի հետ: Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Լեգրանի՝ ՅՍԽՅ ժողովմխորիի նախագահին հասցեագրած 1922 թ. հունվարի 29-ի նամակում նշված է, որ Մոսկվայում Խորհրդային Հայաստանի լիազոր-ներկայացուցչության անձնակազմը բաղկացած էր 11 անձից՝ լիազոր-ներկայացուցիչ, տեղակալ, մեքենագրուհի, հանձնարարությունների համար 3 աշխատակից, քարտուղար, գործավար, հաշվետար, երկու ցրիչ<sup>4</sup>:

1921 թ. հունվարի 15-ին Սահակ Տեր-Գաբրիելյանը նամակ է ուղարկում Խորհրդային Հայաստանի Կոմկուսի կենտկոմ, որտեղ ներկայացնում է իր կատարած աշխատանքը և այն բանակցությունների արդյունքները, որ նա վարել էր Օրջոնիկիձեի, Կիրովի և մյուսների հետ: Բանակցությունները ընթացել են երկու հիմնական հարցի շուրջ՝ Հայաստանին նյութական օժանդակության և Թուրքիային ու Վրաստանին վերաբերող քաղաքական հարցերի: Ս. Տեր-Գաբրիելյանը նշում է, որ նա Խորհրդային Ռուսաստանի կենտկոմին դիմում էր ներկայացրել՝ խնդրելով Հայաստանին տրամադրել 2 մլն արշին մանուֆակտուրա, դեղորայք՝ վեց ամիս մեկուկես միլիոն բնակչությանը բավականացնելու չափ, մեկ միլիոն ոսկի ռուբլի Մակուի խանությունում պարեն գնելու համար, կանոնավոր Հայաստան ուղարկել ամսական 200-250 հզ. փութ հացահատիկ, ինչպես նաև խնդրել էր թույլատրել Հայաստան տեղափոխել Լազարյան ինստիտուտի գրադարանը և թանգարանի ցուցանմուշները: Մոսկվայում ՅՍԽՅ լիազոր ներկայացուցչի պահանջը իրենց ստորագրություններով վավերացրել էին Կիրովը և Օրջոնիկիձեն: Բացի այդ՝ Ադրբեջանին չնեղացնելու համար Ռուսաստանի կենտկոմը որոշել էր նրան նույնպես մանուֆակտուրա տրամադրել: Հատկացվում է 3,5 միլիոն արշին, որից, հաշվի առնելով ՅՍԽՅ ծանր դրությունը, որոշվում է Հայաստանին տրամադրել երկու միլիոնը, Ադրբեջանին՝ մեկուկես միլիոնը:

Սակայն Ստալինի միջամտությամբ որոշումը փոխվում է. մեկուկես միլիոնը՝ Հայաստանին, երկու միլիոնը՝ Ադրբեջանին: Որոշվում է նաև Հայաստանին տրամադրել օրական տասը վագոն հացահատիկ<sup>5</sup>:

Նույն թվականի փետրվարի 14-ին Սահակ Տեր-Գաբրիելյանը «Հրապարակման ենթակա չէ» խորագրով մի դիմում է ուղարկում ՌՍՖՍՀ Արտաքին առևտրի խորհուրդ: «Հաշվի առնելով մեր տրանսպորտի թույլ աշխատանքը և այն արգելքները, որոնք հարուցվում են վրացական կառավարության կողմից, Հյուսիսային Կովկասից Վրաստանի վրայով Խորհրդային Հայաստանի կարիքների համար հացի ներկրումը դադարեցված է: Հայաստանում առկա հացահատիկի և սերմացուի ողջ պաշարը

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 129, թ. 9-10:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ.144, ց. 1, գ. 7, թ.1-2:

թալանվել է թուրքական օկուպացիոն ուժերի կողմից: Հայաստանը քաղցուն է և անհրաժեշտ է մինչև նոր բերքի հասունանալը Հայաստանին օգնել սերմացուով և հացահատիկով: Ստեղծված վիճակից միակ հնարավոր ելքը Պարսկաստանում (Մակուի խանությունում) հացահատիկի ձեռքբերումն է և Շահթահթի վրայով դրա փոխադրումը Երևան: Խնդրում են Արտաքին առևտրի խորհրդին հանձնարարել Վրաստանում Արտաքին առևտրի բաժանմունքին քայլեր ձեռնարկել հիշյալ շրջանից Հայաստանի միլիոնավոր աշխատավորության համար հաց ներկրելու նպատակով»<sup>6</sup>,- գրված է դիմումի մեջ:

1921 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ՀՍԽՀ իշխանությունները քայլեր են ձեռնարկում Հայաստանում արդյունաբերական ձեռնարկություններ հիմնելու ուղղությամբ, ինչպես նաև Ռուսաստանում գործող արդյունաբերական որոշ ձեռնարկություններ Հայաստան տեղափոխելու համար: Այսպես, օգոստոսին ՌՍՖՍՀ-ում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Պաբրիկեյանը և ՌՍՖՍՀ-ում գրեմական պիտույքներ արտադրող ընկերության ղեկավար, ինժեներ Ն. Դրագոսլավը պայմանագիր են կնքում Հայաստանում կառուցվելիք մատիտի գործարանի համար սարքավորումներ պատրաստելու մասին: Այն բաղկացած էր 16 կետից: Առաջին կետում նշված էր, որ Դրագոսլավը Մոսկվայում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ մատիտի արտադրության համար անհրաժեշտ սարքավորումներ պատրաստելու նպատակով պատվեր է ընդունել: 2-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ սարքավորումները պատրաստվելու էին Մոսկվա քաղաքում: Ըստ երրորդ կետի՝ ընդունված պատվերը բաղկացած էր սարքավորումների մեկ կոմպլեկտից, որն ընդգրկում էր 14 տեսակի հաստոց, պատվերի ընդհանուր արժեքը ոսկով կազմում էր 14.000 ռուբլի: 4-րդ կետով Դրագոսլավը պարտավորվում էր կանխավճար տրամադրելու օրվանից չորս ամիսների ընթացքում կատարել պատվերը: 5-րդ կետի համաձայն՝ Դրագոսլավին տրվող ընդհանուր գումարի մեջ էր մտնում նաև արդեն պատրաստի սարքավորումները փաթեթավորելու և Մոսկվա քաղաքում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչության նշած հասցե տեղափոխելու համար անհրաժեշտ գումարը: Ըստ 6-րդ կետի՝ պատրաստվող բոլոր հաստոցները իրենց որակով պետք է համապատասխանեին գրաֆիտի մանրացման նախօրոք ցուցադրած հաստոցի որակին: 7-րդ կետով պայմանագրի մեջ չէր մտնում հաստոցը ձեռքով շահագործման տրանսմիսիան: 8-րդ կետով՝ պատվերի ուշացման յուրաքանչյուր օրվա համար ներկայացուցչությունը Դրագոսլավին չէր վճարելու 50 հազար ռուբլու չափով: 9-րդ կետում նշված էր, որ Մոսկվայում Հայաստանի լիազոր ներկայացուցիչը պատվիրում էր Դրագոսլավին պատրաստել հաստոցների մեկ կոմպլեկտ, որը ութժանյա աշխատանքային օրվա ընթացքում պետք է արտադրեր ոչ պակաս, քան 7.000 մատիտ: Լիազոր ներկայացուցիչը պարտավորվում էր Դրագոսլավին վճարել Սովետական Ռուսաստանի դրամանիշերով, որտեղ մեկ ոսկե ռուբլու փոխարեն տրվելու էր 10.000 ռուբլի: Վճարման ժամկետները հետևյալն էին. կանխավճարը կազմում էր ամբողջ պատվերի 12%-ը. 14 հաստոցներից որևէ մեկի պատրաստ լինելուն պես նրան վճարվելու էր հաստոցի արժեքի 80%-ը, իսկ մնացած 20%-ը վճարվելու էր աշխատանքների ավարտից հետո: 10-րդ կետով՝ հաստոցներն ընդունվելու էին լիա-

<sup>6</sup> Նույն տեղում, գ. 6, թ. 1:

գոր ներկայացուցչի կամ նրա կողմից լիազորված անձի զննումից հետո միայն: 11-րդ կետով հաստոցների զննումը պետք է իրականացվեր յոթնօրյա ժամկետում՝ սկսած այն օրից, երբ Դրագուսլավը կհայտներ դրա պատրաստ լինելու մասին, իսկ արժեքի 80%-ը վճարվելու էր հայտարարությունից հետո քսանօրյա ժամկետում: Քսանօրյա ժամկետի ավարտից հետո Դրագուսլավին գումարը չվճարելու դեպքում լիազոր ներկայացուցիչը պարտավորվում էր յուրաքանչյուր չվճարված օրվա դիմաց վճարել հիսուն հազար ռուբլի: Հայտարարությունից երեսուն օր հետո գումարը չվճարելու դեպքում Դրագուսլավը կարող էր հաստոցները տնօրինել ըստ իր հայեցողության: 12-րդ կետի համաձայն՝ լիազոր ներկայացուցչի փոփոխման դեպքում պայմանագրով ստանձնած պարտավորությունները անցնում էին նոր նշանակված անձին: Ըստ 13-րդ կետի, եթե Դրագուսլավի որևէ հաստոց վատ աշխատեր, ապա նա պետք է նորը պատրաստեր, իսկ պայմանագրով նշված ժամկետները չէին փոխվելու: 14-րդ կետի համաձայն՝ Դրագուսլավը իրավունք ուներ հրավիրելու գործերի կառավարիչ, որն օգտվելու էր լիազոր ներկայացուցչության աշխատակիցներին տրվող բոլոր իրավունքներից, սակայն նրա աշխատավարձը պետք է վճարեր Դրագուսլավը: 15-րդ կետով պայմանագրի ստորագրման պահից Դրագուսլավը համարվելու էր ՌՍՖՍՀ-ում խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչությանը կցված ինժեներ և օգտվելու էր որոշ արտոնություններից: Պայմանագիրը կազմվում էր 2 օրինակից (կետ 16)<sup>7</sup>: Օգոստոսի 10-ին Ս. Տեր-Փաբրիեյանը Դրագուսլավի հետ պայմանագրի նախագիծն ուղարկում է Ժողտնտխորհի նախագահ Ս. Լուկաշինին՝ խնդրելով հնարավորինս կարճ ժամանակահատվածում պայմանագրի վերաբերյալ տալ եզրակացություն: Բացի այդ՝ Տեր-Փաբրիեյանը Լուկաշինից խնդրում է պայմանագրի կետերից յուրաքանչյուրի վերաբերյալ ներկայացնել մանրամասն կարծիք<sup>8</sup>:

Օգոստոսի 18-ին ՌՍՖՍՀ Ժողտնտխորհի կաշվե իրերի արդյունաբերության գլխավոր կոմիտեի կազմում գտնվող Ազովյան կաշվե իրերի գործարանի տնօրենը նամակ է ուղարկում խորհրդային Հայաստանի Ժողտնտխորհի նախագահ Լուկաշինին՝ նշելով, որ ՅՍԽՅ Ժողտնտխորհի հետ նախնական պայմանավորվածության համաձայն Ազովյան գործարանը Հայաստանից ստացվող 3-րդ, 4-րդ և 5-րդ կարգի 100 հազար փուֆ կաշվե հումքի փոխարեն պետք է ուղարկի պատրաստի արտադրանք: Մինչ այդ ուղարկվել է 3000 փուֆ: «Մեզ համար ավելի ցանկալի կլինի, եթե Ձեր մասնակցությամբ մեր լիազորված անձինք ՅՍԽՅ-ի հետ պայմանագիր կնքեն, համաձայն որի, եթե Հայաստանը մեզ տրամադրի 3-րդ, 4-րդ և 5-րդ կարգի կաշվե հումք 100 հազար փուֆի չափով, մեր գործարանը պարտավորվում է առաջին 50 հազար փուֆի դիմաց տալ 1800 փուֆ պատրաստի արտադրանք, իսկ հաջորդ 50 հազարի դեպքում՝ ևս 1800 փուֆ: Կաշվե հումքի որակի և քաշի վերաբերյալ արձանագրությունները կուղարկվեն Հայաստան, որպեսզի «Ազկաշի» գործարանը երաշխավորված լինի պայմանագրի երկուստեք կատարման հարցում, ինչպես նաև Դուք համոզված լինեք, որ սրանով մենք հաշվի ենք առնում երկուստեք շահերը: Տեղում այդ պայմանագրի իրականացման համար մենք Հայաստան ենք ուղարկում մեր ներկայացուցիչներ

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 115, ց. 1, գ. 28, ք. 7:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, ք. 2:

Լապիդոսին և Սկյասին և նրանց օժտում ենք համապատասխան լիազորություններով»<sup>9</sup>, - գրված է նամակի վերջում: Այս պայմանագրի հետագա ճակատագրի վերաբերյալ արխիվային փաստաթղթերում մեզ այլ տվյալներ հայտնաբերել չհաջողվեց:

Օգոստոսի 15-ին ՅՍԽՅ ժողտնտխորհը նամակով դիմում է ՌՍՖՍՀ-ի կառավարությանը՝ խնդրելով ապամոնտաժել և Չայաստան ուղարկել մանվածքային գործարանը և տրիկոտաժի ֆաբրիկան: Ըստ երևութին ռուսական կողմի պատասխանը դրական է եղել, քանզի ընդամենը 4 օր հետո՝ օգոստոսի 19-ին Լուկաշինը Մոսկվայում բնակվող ինժեներ-տեխնոլոգ Ս. Տեր-Չակոբյանին հանձնարարում է կազմակերպել ՌՍՖՍՀ-ից Խորհրդային Չայաստանին փոխանցված մանվածքային գործարանի և տրիկոտաժի ֆաբրիկայի ապամոնտաժումը և դրանց տեղափոխումը Չայաստան: Լուկաշինի հանձնարարության մասին մենք տեղեկանում ենք Տեր-Չակոբյանի զեկույցից, որը նա սեպտեմբերի 26-ին ուղարկել է Մոսկվայում ՅՍԽՅ լիազոր ներկայացուցչություն: Ըստ նրա՝ գործարանների ապամոնտաժման, փաթեթավորման և դրանք Չայաստան տեղափոխելու հարցերը պետք է կարգավորվեն միայն այն բանից հետո, երբ կստացվի օգոստոսի 15-ի գրության պատասխանը: «Եթե հարցը դիտարկենք այն տեսանկյունից, որ պատասխանը կլինի դրական, ապա անհրաժեշտ է հաստատել անհրաժեշտ սարքավորումների քանակը, այսինքն իլիկների քանակը մանվածքային գործարանի համար և տեքստիլ հաստոցների քանակը՝ տրիկոտաժի ֆաբրիկայի համար, - գրում է Տեր-Չակոբյանը: Չաշվի առնելով հարցի անորոշությունը՝ ես 2 գործարանների ապամոնտաժման, փաթեթավորման, տեղափոխման և վազոնների վրա բարձման համար նախահաշիվ եմ ներկայացրել, էլեկտրոլ այն հանգամանքից, որ տեղափոխվելու է 40 հազար իլիկ ունեցող մանվածքային գործարան և 400 հաստոց ունեցող տրիկոտաժի ֆաբրիկա»<sup>10</sup>: Ձեկույցին կից Ս. Տեր-Չակոբյանն ուղարկում է մանրամասն նախահաշիվ, համաձայն որի այդ ամենի համար անհրաժեշտ էր 450 մլն ռուբլի<sup>11</sup>: Տեր-Չակոբյանի կարծիքով՝ անհրաժեշտ էր արագ գործի անցնել, քանի որ նախահաշվի ներկայացման պահից սկսած արդեն ընդամենը մեկ ամիս հետո այդ գինը կաճեր 12%-ով, իսկ 2 ամիս հետո՝ 24%-ով: Ձեկուցողի կարծիքով՝ դա պայմանավորված էր Ռուսաստանի ներքին շուկայում ռուբլու՝ անսական 12%-ով արժեզրկմամբ<sup>12</sup>:

Չայ-ռուսական վերոհիշյալ տնտեսական պայմանագրերի շարքը վկայում է այն մասին, որ ՅՍԽՅ իշխանությունները և հատկապես Ռուսաստանում Խորհրդային Չայաստանի լիազոր ներկայացուցչությունը ակտիվ աշխատանքներ էին իրականացնում և՛ երկկողմ տնտեսական կապերի ամրապնդման, և՛ Չայաստանի արդյունաբերության զարգացման ուղղությամբ:

1921 թ. սեպտեմբերի 30-ին արտգործող կոմ Չիչերինի և Խորհրդային Ռուսաստանում ՅՍԽՅ լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանի միջև կնքվում է ֆինանսական հարցերի շուրջ համաձայնագիր: Այն բաղկացած էր նախաբանից և 9 հոդվածից:

<sup>9</sup> Լույն տեղում, թ. 13:

<sup>10</sup> Լույն տեղում, թ. 23:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 22:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 21:

Համաձայնագիրը բխում էր երկու երկրների ֆինանսական քաղաքականությունը համաձայնեցնելու անհրաժեշտությունից և այդ նպատակով նախատեսում էր, որ ՌՍՖՍՀ-ի ֆինանսների ժողկոմը Հայաստանում պետք է ունենար իր մշտական լիազորը՝ ի դեմս Հայաստանի ֆինանսների ժողկոմի, որն ընտրվում էր մյուս ժողկոմներին հավասար հիմունքներով և նշանակվում էր Հայաստանի կենտրոնական կոլլեկտիվի համաձայնեցնելով ՌՍՖՍՀ-ի ֆինանսների ժողկոմի հետ (հոդվ.1): Մյուս հոդվածներում նախատեսվում էին դրամական հարկերի և գանձումների սահմանման կարգը, հանրապետությունների ֆինանսական ու գանձարկղային հիմնարկների փոխհարաբերությունները, նախահաշիվների համաձայնեցումը երկու հանրապետությունների ընդհանուր պլանային առաջադրանքների հետ և այլն: Ֆինանսական հարցերի շուրջ Խորհրդային Հայաստանի և ՌՍՖՍՀ-ի միջև կնքված համաձայնագրի 8-րդ հոդվածով սահմանվում էր, որ ՌՍՖՍՀ-ի և ՅՍՖՍՀ-ի թղթադրամները, հաշվարկային և մյուս վճարանիշերը երկու հանրապետությունների տարածքում էլ հավասարապես շրջանառելի են: Այդ համաձայնագիրը ենթակա չէր հաստատման և ուժի մեջ մտավ ստորագրելու օրից, այսինքն՝ 1921 թ. սեպտեմբերի 30-ից<sup>13</sup>:

1921 թ. սեպտեմբերից մինչև 1922 թ. մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների մասին որևէ փաստ արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության ժամանակ մեզ հայտնաբերել չհաջողվեց: Երկկողմ տնտեսական կապերի որոշակի աշխուժացում է նկատվել 1922 թ. փետրվարից: Շնորհիվ Մոսկվայում ՅՍՖՍՀ լիազոր ներկայացուցչության ջանքերի՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունները ակտիվ աշխատանք են կատարել Ռուսաստանում արդյունաբերական ձեռնարկությունների ձեռքբերման և դրանք Հայաստան տեղափոխելու ուղղությամբ: Այդ գործարանների համար վճարվում էր կանխիկ գումար, սակայն 1922 թ. փետրվարի սկզբին Լուկաշինին ուղղված գրության մեջ Ս. Տեր-Գաբրիելյանը նշում էր, որ Հայաստանի համար ավելի շահավետ կարող է լինել Ռուսաստանից ապրանքափոխանակության միջոցով այդ գործարանները գնելը, քանի որ մինչև կանխիկ գումարը հասնի Մոսկվա, այն կարծեգրկվի ավելի քան 50%-ով, մինչդեռ դրա փոխարեն կարելի է ուղարկել ապրանք, որը հնարավոր է տեղում վաճառել եռակի թանկ գնով: Ըստ նրա՝ հնարավորության դեպքում անհրաժեշտ է ուղարկել ավելի շատ կարբիդ և պղինձ: Վերջում Տեր-Գաբրիելյանը մտահոգություն է հայտնել այն առթիվ, որ Ռուսաստանի հետ ապրանքափոխանակության տեմպերը շատ դանդաղ են: «Իմ կարծիքով՝ Դուք այդքան էլ հակված չեք ապրանքափոխանակություն իրականացնել Ռուսաստանի հետ, մինչդեռ Ռուսաստանի բոլոր քաղաքները, գյուղերը, նույնիսկ առանձին խոշոր գործարաններ, իրենց ներկայացուցչություններն ունեն Մոսկվայում»<sup>14</sup>, - գրված է Ս. Տեր-Գաբրիելյանի հեռագրում:

1922 թ. փետրվարի 6-ին ՅՍՖՍՀ տեքստիլ արդյունաբերության գլխավոր վարչության ղեկավարը նամակ է հղում Իվանո-Վոզնեսենսկ նահանգի ժողտնտխորհին՝ խնդրելով գնահատել և Հայաստանին տրամադրել նույն

<sup>13</sup> Стн "История Советской Конституции в декретах и постановлениях советского правительства 1917–1936 гг.". М., 1936, էջ 187-189:

<sup>14</sup> ՀԱԱ, ֆ. 115, ց. 1, գ. 82, թ. 129:

նահանգի Շույսկի շրջանում գտնվող տրիկոտաժի լուծարված ֆաբրիկան<sup>15</sup>: ՈՍՖԽՅ-ում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչությանը հաջողվում է Շույսկի շրջանում ձեռք բերել ևս երկու բուլդոզեր և մեկ գործարաններ՝ 28 հազար իլիկ ունեցող մանվածքային գործարան և 350 հաստոց ունեցող տրիկոտաժի ֆաբրիկա: Այդ մասին տեղեկանում ենք Ս. Տեր-Փաբրիկյանի՝ փետրվարի 8-ին Լուկաշինին ուղարկած հեռագրից: Այդ գործարանների պահպանության համար Փաբրիկյանը ՀՍԽՅ ժողտնտխորհի նախագահին խնդրում էր շտապ Մոսկվա գործուղել 2 սպայի և 20 կարմիրբանակայինի: «Բոլոր ջանքերը ներդրված են գործարանների շտապ տեղափոխման համար»<sup>16</sup>, - նշված է հեռագրի վերջում: Փետրվարի 22-ին Իվանո-Վոզնեսենսկ նահանգի ժողտնտխորհը դրական պատասխան է տալիս ՀՍԽՅ տեքստիլ արդյունաբերության գլխավոր վարչության ղեկավարի նամակին և որոշում է Հայաստանին նվիրել Նովո-Փոլչիխինյան մանվածքային գործարանը: Իր պատասխան նամակում հայկական կողմը շնորհակալություն է հայտնում նվերի համար և խնդրում գործարանը հանձնել Ռուսաստանում ՀՍԽՅ լիազոր ներկայացուցչի վստահված անձ ինժեներ Կարազանովին՝ այն Հայաստան տեղափոխելու համար<sup>17</sup>:

1922 թ. նույն նահանգի տեքստիլագործները որպես նվեր Հայաստան են ուղարկում 1800 իլիկ և 450 ջուլիակագործական հաստոց, որոնց հիման վրա էլ Ալեքսանդրապոլում հիմնադրվում է թեթև արդյունաբերության ապրանքների արտադրությունը<sup>18</sup>:

Մոսկվայում ՀՍԽՅ լիազոր ներկայացուցիչը պարբերաբար նամակներ էր ուղարկում ՀՍԽՅ կառավարությանը՝ պահանջելով արտաքին առևտրում շեշտը դնել ապրանքափոխանակության վրա: Տեր-Փաբրիկյանը շատ լավ հասկանում էր, որ դրամական միջոցներից զուրկ Հայաստանի համար դա հիանալի միջոց է հանրապետություն անհրաժեշտ ապրանքներ ներմուծելու համար: Մարտի 1-ին այդ բովանդակությամբ իր հերթական նամակում Տեր-Փաբրիկյանը գրում էր. «Մեկ անգամ ևս կրկնում են. հաստատեք ապրանքափոխանակություն Մոսկվայի հետ: Դա բխում է Հայաստանի շահերից: Օգտագործեք պարսկական շուկան՝ չէ՞ որ Դուք ունեք Իրանական Ադրբեջանի բանալին: Ռուսաստան ուղարկեք կարբիդ, պղինձ և ուրիշ ինչ որ կարող եք: Դրանք այստեղ կփոխենք անհրաժեշտ ապրանքների հետ: Ուղարկեք նաև 10.000 շիշ կոնյակ: Լազարյան ինստիտուտում ես պատրաստել եմ շատ հուսալի պահեստ: Ապրանքը հանգիստ կարող ենք տեղավորել»<sup>19</sup>:

Հայաստանում գյուղատնտեսության վերականգնմանը զուգընթաց մեծ ուշադրություն էր դարձվում խաղողագործության զարգացմանը: Գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումն իր հերթին նպաստում էր երկրում կոնյակագործության և գինեգործության աճին: Տնտեսության այդ ճյուղը Հայաստանում հիմնադրել էր Շուստովը դեռևս Ռուսական կայսրության տարիներին և բավականին կարճ ժամանակահատվածում հասցրել

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 131:

<sup>16</sup> Նույն տեղում, թ. 132:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 141:

<sup>18</sup> Տե՛ս Ս. Մելքունյան, Հայկական ՍՍՀ տնտեսական կապերը, Եր, 1979, էջ 69:

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 115, ց. 1, գ. 82, թ. 140:

էր մեծ ճանաչում ձեռք բերել: Կոնյակագործությունը, որը ժամանակին Հայաստանի տնտեսության առաջատար ճյուղն էր, ամբողջովին քայքայված էր: Գալով իշխանության՝ հայ բուլշևիկները մեծ աշխատանք ծավալեցին կոնյակագործության զարգացման ուղղությամբ: 1921 թ. օգոստոսի 21-ին ՌՍՖՍՀ Ժողկոմխորհը հրատարակում է «Հայաստանում խաղողագործության վերականգնման և գինեգործության արդյունաբերական զարգացման մասին» որոշումը, որի հիման վրա ՀՍԽՅ Ժողկոմխորհի կողմից ստեղծվում է գինու-կոնյակի «Արարատ» տրեստը<sup>20</sup>: Բացի կոնյակի արտահանումից՝ այս ոլորտում ռուս-հայկական համագործակցության օրինակ է 1922 թ. մայիսի 3-ին Դոնի ապակեգործական պետական գործարանի և «Արարատ» տրեստի միջև համաձայնագրի կնքումը, ըստ որի՝ «Արարատ» տրեստը Դոնի գործարանից պետք է ներկրեր տարբեր տարողության շշեր<sup>21</sup>:

Ամփոփելով պետք է նշել, որ Խորհրդային Հայաստանի կառավարության և մասնավորապես Մոսկվայում ՀՍԽՅ լիազոր ներկայացուցչության ներդրած համատեղ ջանքերի շնորհիվ հաջողվեց Ռուսաստանում ձեռք բերել բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ և դրանք տեղափոխել Հայաստան, ինչն էլ իր հերթին նպաստեց ՀՍԽՅ տնտեսության, հատկապես արդյունաբերության զարգացմանը: Հայաստանում զարգացում ապրեց հատկապես թեթև արդյունաբերությունը, քանի որ Ռուսաստանում ձեռք բերված արդյունաբերական ձեռնարկությունները մեծ մասամբ տեքստիլ ֆաբրիկաներ էին:

**ГРИГОР БАЛАСАНЯН – Из истории торгово-экономической деятельности полномочного представительства ССРА в Москве (1921–1922 гг.).** –

Статья посвящена экономической деятельности полномочного представителя Советской Армении в Москве Саака Тер-Габриеляна. Благодаря его усилиям в России было куплено и переправлено в Армению несколько заводов и трикотажных и текстильных фабрик. Это способствовало развитию в республике экономики, в частности лёгкой промышленности, и улучшило тяжёлую социально-экономическую ситуацию. В августе 1921 г. С. Тер-Габриелян заключил договор с главой предприятия по изготовлению канцелярских товаров Драгославом о поставке станков для строящейся в Армении карандашной фабрики.

Ключевую роль в финансово-экономическом развитии Армении сыграл заключённый 30 сентября 1921 г. договор между наркоминделом РСФСР Г. Чичериным и С. Тер-Габриеляном. Согласно этому договору нарком финансов России был вправе иметь в Армении своего постоянного представителя; кроме того, договор регулировал отношения финансовых учреждений двух республик.

В 1921–1922 гг. из Армении в Россию было отправлено 600.000 пудов хлопка, 490.000 пудов соли, 122.000 пудов железной руды и около 1 млн. пудов сухофруктов.

Обобщая, можно сказать, что деятельность С. Тер-Габриеляна на посту полномочного представителя во многом содействовало развитию армянской экономики.

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 168, ց. 1, գ. 30, թ. 1:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 115, ց. 1, գ. 155, թ. 2:

**GRIGOR BALASANYAN – *From the history of trade-economic activities of the authorized USSR representative in Moscow***(1921-1922). – The paper considers the economic activities of the authorized Soviet Armenian representative in Moscow, Armenia's plenipotentiary representative, Sahak Ter-Gabrielyan. It was mainly due to his efforts that several factories and companies had been purchased on the territory of Russia and been sent to Armenia. Those were mainly knitted goods factories. With the help of these factories, the economy, namely the light industry in Armenia, experienced a boom, which in its turn had a positive impact on the unfavourable social-economic situation in the republic.

Sahak Ter-Gabrielyan and the head of the stationery production department Dragoslav had an agreement made, according to which lathes were to be produced for the pencil factory that was being constructed on the territory of Armenia. Between August 1921 and February 1922, several textile factories were purchased and transferred to Armenia from Ivano-Woznesenskoye Province.

The treaty signed between S. Chicherin, the RSFSR national commissar of foreign affairs, and S. Ter-Gabrielyan, on September 30, 1921, had a key role in furthering the financial-economic development in Armenia. Not only did the treaty regulate the relationships between various financial institutions of both republics, but it also granted the RSFSR Financial National Committee a right to have their permanent representative on the territory of Armenia.

Between 1921 and 1922, 600.000 poods of cotton, 490.000 poods of salt, 122.000 poods of iron ore, and nearly 1 mln. poods of dry fruits were sent to Russia from Armenia.

To sum up, one can conclude the work of the authorized representative to have been productive for the economy of Soviet Armenia.